



Զապել Եսայան

Նամակ Աննա Բուդաղյանին 2

1927 թ. սեպտեմբերի 5, Բարիզ

Աննա Բուդաղյանին

Այս երկտողըս կորկեն Ձեզ իմացնելու համար, որ ստացա Ձեր վերջին նամակը: Հետևյալ օրն իսկ պետք էր մեկնել Լիոն, ուր հրավիրված էի քանախոսություն մը ընելու: Այսօր Լիոնեն կվերադառնամ Բուիկեն: Կհուսամ, որ շուտով կուգամ Բարիզ և այլևս ավելի անմիջական միջոցներով կհետապնդեմ Փափագյանի վիզայի խնդիրը: Կնախատեսեմ կարգ մը դժվարություններ, նկատի առնելով ներկա ընդհանուր կացությունը, բայց, ինչ արած, պետք է հաջողի: նոր լուր չստացա իմ ծանոթես: Բուիկեն վերադառնալիս կգրեմ՝ կրկին և թերևս ժամադրություն տամ իրեն Բարիզի մեջ:

Մեծապես շնորհակալ կըլլամ Ձեզ, եթե ինձ իմացնեք Սիմոնիկի ժամանման թվականը: Ընդհանուր կացությունը, մանավանդ օտարականներու համար, շատ արագ ընթացքով կդառնա ծանրակշիռ: Մասնավոր տեղեկություններ ունիմ, որոնք ինձ կներշնչին մտահոգություններ: Անհամբեր եմ Բարիզ վերադառնալու, բայց այդ մասամբ ինձմե կախում չունի: Կհուսամ, սակայն, որ այլևս չեմ ուշանար և հաճույքը կունենամ Ձեզ տեսնելու:

Ձերմագին բարևներ Ձեր ամուսնույն և Ֆերիասին, և Ձերդ լավագույն զգացումներով՝

Զապել Եսայան